

ՍՈՒՐԻ ՈՍԿԵՐՔ ¹⁾

Անապատ, անշէն, դաշտ էր ընդհանուր,
Ուր թափառում եմ մտայոյդ, տխուր.
Ուր աւերակաց տրտում տեսարան
Բերէ անախորժ զգացմունք իմ վերան:

Աղամայ որդւոց չէր լսվում աստ շունչ,
Այլ բուի ճշիւն, աղուխուց մռունչ,
Միակ յիշատակ աստ հին մարդկութեան
Ներկայանում է ցուրտ դամբանարան:

Անգութ ժամանակ,— Կռուլն ծերունին,
Ստեղծագործութեան այդ հին թշնամին,
Մարդկանց մարմիններ փոշի դարձրել ողջ,
Մի կառափ միայն մնացել էր ամբողջ:

Անապատի մէջ, թէև դուղնաբեայ,
Վաղամեռ մարդու այդ մնացորդը
Ինձ շատ գրաւեց, վեր առայ նորան,
Դրած, նայում եմ, իմ ծնկի վերան:

Երանի՜ վերին գրոց սրբազան
Լինէի դպիր, և տառք զանազան
Ես բացատրէի այդ լայն ճակատին,
Թէ ով էր արդեօք մարդու այդ որդին:

1) Այս սերգը գրելուն առիթ է տուել մի ասանդուլթիւն, որ 1856 թուին անցանելով Աւարայրի դաշտից, լսեցի մի շինականից:

Արդեօք արքայի դա գլուխ թագազարդ,
Որ իւր գահոյից մահուան սուր գեղարդ
Ձարկեց, կործանեց, տարաւ հողի տակ,
Կորաւ նորա փառք, մարգարտեայ պսակ:

Արդեօք մի աղքատ, քրքրուած մուրացիկ,
Որոյ կենաց թել սովոյ կտրեց ժանիք,
Եւ բարի մարդիկ նորա մեռած դին
Բերին թաղեցին մէջ այդ ցուրտ հողին:

Արդեօք ծերունի մի սուրբ բարուն,
Քարոզող Փրկչի կտակ և անուն,
Վարվարաց ձեռքից խմաւ դառն բաժակ,
Յիսուսի սիրուն եղաւ նահատակ:

Ասա, ով վերին գողտրիկ Ձուարթուն,
Որ պահպանում ես այդ փթած աճին,
Ո՛ւմ կը պատկանի փշրած այդ կառափ,
Որ բերէ գաղտնի ինձ վերայ սարսափ:

Յանկարծ լսելի եղաւ մի հնչիւն,
Որպէս գեփիւտի հեզիկ շնչիւն:
Եւ նորա միջից որոշ այդ ձայներ
Ինձ զմայլանաց բերեն հիացում:

«Դա էր քաջ Վարդան այն հայ տղամարդ
«Ճաւարչան դաշտում մարտնչեց իւր մարտ,
«Վրօնի, Հայրենեաց և Ազգի համար
«Նա թափեց արիւն, եղաւ զոհ արդար:

«Դա սպարապետ էր Հայոց զօրքին,
«Միրող հայրենեաց, սիրող իւր ազգին:
«Որ մինչև կենաց իւր վերջին վայրկեան
«Եղաւ իւր ազգին շահաւէտ անդամ»:

Աներևոյթ ձայն ազդեց իմ սրտին,
 Ես սուրբ նշխարքը դրեցի գետին.
 Եւ նորա առջև ծոնակ իջայ շուտով,
 Երկրպագեցի երկիւղած սրտով:

Ինձ տիրեց սարսափ: Կոչեմ սաստկազին. —

— «Դա ազգասիրի գլուխ է անգին,
 Դա մեր Հերոսի զանգն է քաջազէն,
 Որ փրկեց կրօն զենտի կրակէն:

— «Քեզ, ով սուրբ ոսկերք, ես պիտի պաշտեմ,
 Ոսկի, արծաթի սափորում կ'ամփոփեմ,
 Կը շինեմ մատուռ, տաճար, սուրբ սեղան,
 Կը կանգնեմ քեզի մի անմահ արձան:

— «Առաւօտեան շուտ ես քո առջևը,
 Եւ երեկոյեան ծնկներու վերայ,
 Կը լամ, կը վերուղղեմ աղօթք ջերմաջերմ,
 Դու իմ բարեխօս, ես քեզ կ'աղերսեմ:

— «Երբ որ դաւ դնէ անգուլթ թշնամին,
 Եւ պատժել պէտք էր այն անզգամին,
 Ես կռուի դաշտում, սուրը իմ ձեռքում, —
 Կը խնդրեմ միայն քեզնից օգնութիւն:

— «Ծովի միջումն երբ տանջէ մըրիկ,
 Ինձ տակով անհն լեռնացեալ ալիք,
 Երբ կըսպառնայ ինձ մահ և սարսափ
 Անապատի մէջ մի Բէտով — Արաբ. —

— «Ամէն տեղ, ամէն փորձանքում
 Քո անուն կը յիշեմ, քեզնից օգնութիւն,
 Քեզնից փրկութիւն ես միշտ կը խնդրեմ,
 Դու ես մեր Փրկիչ, ես քեզ կը պաշտեմ:

ՐԱՔՔԻ